ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N_46

Տուգանք նշանակելու մասին

02.03.2022թ. ք. Երևան

Քննելով տեսչական մարմնի կողմից 2022թ. հունվարի 31-ի N 64-Ա հրամանով

«ՀՐԱՇՔ ԱՅԳԻ» ՍՊԸ -ում /ՀՎՀՀ՝ 01809336/

Տնտեսվարող սուբյեկտի անվանումը

կատարված ստուգման նյութերը (ստուգման ակտ N 64-Ա կազմված 28.02.2022թ., խախտումների մասին 04.02.2022թ. արձանագրությունը և այլ նյութերը), որոնցով բացահայտվել է որ՝

«Հրաշք Այգի» ՍՊԸ-ում իրականացվել է ստուգում համաձայն «Ցածրավոլտ սարքավորումների անվտանգության ստուգման վերաբերյալ» և «Տեխնիկական միջոցների էլեկտրամագնիսական համատեղելիության ստուգման վերաբերյալ» ստուգաթերթերի:

Ստուգման ընթացքում պարզվեց, որ վերոնշյալ ստուգաթերթերով ընդգկված բոլոր արտադրանքները 2020 թվականի հուլիսի 7-ից առ ստուգման պահը ներմուծվել և իրացվում է առանց համապատասխանության գնահատման փաստաթղթերի, ինչպես նաև բացակայում է տեխնիկական կանոնկարգերով սահմանված պահանջներով ներկայացվող հայերեն մակնշումը:

Փաստացի խախտվել են Մաքսային միության հանձնաժողովի 2011թ. օգոստոսի 16-ի N768 որոշմամբ հաստատված «Ցածրավոլտ սարքավորումների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 004/2011) կանոնակարգի 3-րդ հոդվածի 1-ին կետի, 5-րդ հոդվածի 1-ն և 5-րդ, 8-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ կետերի և Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N879 որոշմամբ հաստատված «Տեխնիկական միջոցների էլեկտրամագնիսական համատեղելիության» (ՄՄ ՏԿ 020/2011) կանոնակարգի 3-րդ հոդվածի 1-ին կետի, 8-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ հոդվածի 1-ին, 4-րդ և 5-րդ կետերի պահանջները:

Կատարված իրավախախտման հանգամանքները և խախտման էությունը

Նշված իրավախախտման համար պատասխանատու է՝

Տնօրեն՝ Արթուր Վանիկի Իվանյանը
իրավախախտողի անունը, ազգանունը, պաշտոնը

ՀՀ, Կոտայքի մարզ, Ջրվեժ 36փ., 30, 32տ.
մշտական բնակավայրը և հասցեն

Նկատի ունենալով կատարված իրավախախտման բնույթը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, հաշվի առնելով վարչական վարույթի նյութերով առկա տեղեկությունները խախտողի անձի, նրա մեղքի աստիճանի և գույքային դրության վերաբերյալ, ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244.7 հոդվածով, 281-րդ հոդվածով և 282-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Տվյալ իրավախախտման համար պատասխանատու ճանաչել Արթուր Վանիկի Իվանյանին և կիրառել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված պատասխանատվության միջոցը, սահմանել տուգանք՝ համապատասխանաբար՝ 130 000/ հարյուր երեսուն հազար/ ՀՀ դրամ և 120 000/ հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ, ընդհանուր՝ 250 000 /երկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամի չափով:

2. Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 305 հոդվածի՝ տուգանքը պետք է վճարվի **Պետական բյուջե 900005024014 հ/հ** տուգանք նշանակելու մասին որոշումը իրավախախտողին հանձնելու օրվանից ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում:

3. Տուգանք նշանակելու մասին որոշման հարկադիր կատարումը իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ բաժնի դրույթներին համապատասխան:

4. Տուգանքը սահմանված ժամկետում վճարելուց հետո բանկային կտրոնի պատճենը անհրաժեշտ է 3 օրվա ընթացքում ներկայացնել տեսչական մարմնին՝ ք. Երևան, Կոմիտասի 49/2 հասցեով:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում Վարչական դատարան:

ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԿՈՏՈԼՅԱՆ**

167/22-25